

ԲԱԶՄԱՎԵՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԱԶԳԱՅԻՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԹԵՐԹ

ՌՅԿԸ-Թ


ՀԱՏԱՐ

ՀԷ

1919

ՆՈՅԵՄԵՐ

ԹԻԻ 11



ԵՐԱՆԻՍ ՏԱՄՔ ՔԵԶ ՀԱՅՈՒՑ ԱՇԽԱՐՀ

Դարէ ի դար յուսահատեալ տի գնան Հայերս:
ԶԷ՛. ողորմածն Աստուած թողն չէ զՀայաստան.
Նա ինքն զինքն է զընթրիւ յայտ խոր զընդան.
Երբ կամի՛ կանգնի. բայց թող գնան կրօնի:
Երթայ՝ նախանձ, թող զայ սէր, թող միանան սիրտը.
Յանժա՛մ չ'ողբայ զքեզ, Նաչապետս, Հայ՛ց աշխարհ,
Ալ երանիս կարգայ բերանս հոգու հաւատարմ:

Հայր Ալիշանի արեւն յիսունական թուա-
կաններուն կը բարձրանար հայրենիքի հո-
րիզոնի վրայ. անոր Նահապետի երգերու
հայրենասիրական մրմունջներն՝ անոյշ թըմ-
բլումներն կը սնտափեցնէին Հայ մանուկների
հոգիին եւ վերածնունդեան կայծն՝ մանոց
մատաղ արտերու մէջ երնարով հրդեհի պի-
տի փոխուէր: Ազգային պուլէտը անոր շաւ-
ղով գնացին, անոր հոգին շնչեցին. հինգ
դարերու խոր ու թանձրամաճ քունէ զազգը
արթնցուցին: Վերուծեան շղթայներն ճնշեր
էին անոր հոգիին, մտքի հրազն բռնութեան
խաւարով մեղաքներ էր, բայց անոր երակ-

ներու մէջ խաղացող քաղաքակրթութեան
կարմիր արիւնն ջուրի չէր փոխուած, չէր
այլասերուած տիրապետողի անբարոյական
եւ բռնամիտ ցեղի նման: Ուստի կէս դարու
ընթացքում, նա բարոյապէս, քաղաքացիա-
կան գիտակցութեամբ հասուն, սկսաւ նուի-
րել իւր հոգեկան եւ մտաւորական բոլոր
ուժերն հայրենիքի վերածնունդեան, հայ
ազգի ազատագրութեան:

Հ. Ալիշան հայրենիքի ազատութիւնը կը
տեսնար ազգի համերաշխ գործելակերպին
մէջ. փրկութիւնն միութեան մէջն է. միու-
թիւնն կը կազմէ այն ոյժը, որով կարելի է
դիմադրել, վանել եւ յաղթել թշնամունքն:
Նահապետն, իւր յոյսը օտարներու օգնու-
թեան վրայ չի դնէր իրեն միակ գործօն
մեր ազատութեան, այլ կը զգացնէ թէ
Հայը պէտք է վստահի ինքն իր վրայ, յոյսը
իւր մեծերու վրայ դնէ, եւ խնամրի ազգիս
գործերն ղեկավարող մարմնի հեղինակու-
թեանց առջեւ. անոր համար դրած է առող-

ջապահիկ պայմաններն գործի յսջողու-
թեան».

ԵԹԷ ԿԱՄԻՒՆ ԿԱՆԿԱՆ ԲԱՅԵ ԹՈՂ ԳՆԱՆ ԿՈՒՅՑ.

ԵՐԹԻՎ ՆԱԽԱՆՈՒԹ, ԹՈՂ ԳԱՅՍ ԵՐԻ, ԹՈՂ ՄԻՆԱՆԱՆ ՍՈՐԵՑՔ.

Միութիւն մը՝ սուսնց հեղինակաւոր իշխանութեան չի կատարուիր : Հայր Ալի-
շանի տողերն յիշելու հարկ չսխալի զգայինք,
եթէ Պարիսու Հայկական Պատուիրակու-
թեան մէկ երկու յայտարարութիւններն
չգային կակիծ եւ ցաւ բերելու, տեղի ունե-
ցած տարածայնութեանց եւ երկպառակու-
թեանց մասին՝ որ ժամանակէ մ'ի վեր մտեր
էր Հայկական միացեալ Պատուիրակու-
թեանց միջեւ : Լրագիրներու գրածներէ կը
հասկացուէր թէ՝ եկեր են կուիւք, դարձեր
է նախանձն, հեռացեր է սէրն, հեղքուեր
են սրտերը : « Ի՞նչպէս չ'որայ գրեզ, Նա-
հապետն, Հայրց աշխարհ » : Հայ ազգին
Պարիս զրկած պատուիրակներու ընտրու-
թիւնն տարակուսի եւ կասկածներու կ'են-
ծարկուէր, անոր հետեւանք նախագահի
իրաւունքներն եւ հեղինակութիւնն կուսակ-
ցականօրէն արհամարհութեան կ'ենթար-
կուէր :

Այնու հանդերձ որ սպասու եւ անկողմնա-
կալ քննադատութեան համակիր եղած
ենք, կ'ստենք դարձեալ դատապարտելի է
այն լեզուն որ ընդհանրութեան շահերուն
ի վնաս, գոյուծիւն ունեցող լիազօր մար-
մնոյ մը հեղինակութիւնն կը հզօնի վարկա-
բեկ ընել ազգիս եւ օտարներու առջեւ,
առանց կարենալու զայն փոխանակել օրի-
նական միջոցներով, առանց կարենալու
հանաչեցնել տալ զինքն քաղաքական աշ-
խարհի՝ իբրեւ միակ հեղինակաւոր իշխա-
նութիւն մը միացեալ անկախ Հայաստանի
համար : Ո՞ր հասուցին զեզ եւ Հայկական
դատը, այս մի քանի ամիս խուլ պայքարն՝
պատերազմի սկիզբէն՝ Հայոց բարձրագոյն
իշխանութեան՝ հաստատուած եւ Դաշնա-
կիցներէն ընդունուած եւ յարգուած Հայ-
կական Պատուիրակութեան եւ անոր նա-
խագահի վստմ. Պօղոս Նուպարի դէմ : Ան
տեղն հասուցին, որ մեր ներքին երկպառա-
կութիւնն՝ մէկ կողմէն կասկածելի ըրաւ

դաշնակիցներու մեր քաղաքական հասու-
նութիւնն՝ ազատ Հայաստան մը ինքնօրէն
կառավարելու : Իսկ միւս կողմէն գրգռեց
բարբարոսներու ակորժակն բզբռելու Հայ-
կական Համարապետութիւնը, որ կ'ուզէր
ինքնօրէն Միացեալ Հայաստանի մը տէրն
եւ կառավարին հանդիսանալ :

Կարելի՞ է ժխտել այս ցաւալի երեւոյթն :
Ան տան ամիս Դաշնակիցներու յաղթա-
նակէն եւ զինադադարէն վերջը, Պատուի-
րակութեան հաղորդած մէկ երկու լուրերէն
խմացուցաւ թէ Հայաստանն դեռ 1915ի
արհաւիրքներու տակ կ'ապրի, եւ չարա-
գոյն եւս, Թուրքի վտանգն օր աւուր կը
ծանրանայ Հայկական Համարապետութեան
վրայ, Հայ ցեղը բնաջնջ ընելու սպառնա-
լիքով : Թուրք գազանի ապերասան համար-
ծակութիւնն պահ մը մտածել կու տայ թէ՝
կը քաջաւերուի դաշնակիցներու անտար-
բերութենէն, վերսկսելու իրենց խժու-
թիւններն : Զինադադարի կարեւոր պայ-
մաններէն մէկն չէր կատարուած, ծնարակի
հաշտութիւն խնդրող Թուրքի գէնքն՝ առ-
պետական վեհանճնութեամբ շնորհեցին ա-
նոր, զինամաքի չորին մարդ-գազաններն :
Այսօր անոնք յանդգնութիւն կ'ունենան
յաղթողին երեսը տալ անոր թուլութիւնն եւ
գործած մեծ սխալը : Իսկ անոնց հօգորդաշ-
նակիցն՝ մեր Հայոց անմիաբանութիւնն է,
երկարամատականոթիւնն որ խրամատ մը կը
բանայ անոնց առջեւ խուժել մեր տունն,
տիրել անոր եւ քանդել : Այսպէս մինչ մենք
ներքին կռիւներով զբաղած, մեր ոսոխներն
արթնու գտուեցան վարկաբեկելու ազգե-
րնս՝ մեր բաղդը վճռող մեծ Պետութիւն-
ներու առջեւ եւ հաստատելու թէ՝ միացեալ
Հայաստանի մը անկախ տէրութիւնն, կամ
« կայսերութիւն », (ինչպէս « Տառ » լրա-
գիրն հակառակ իւր լրջութեան՝ կը հեզնէր
Հայոցս Կիլիկիոյ համար ըրած իրաւացի
պահանջն) խռովարար եւ յափշտակիչ տարր
մի պիտի դառնար Թուրք ու Թուրքա-գառ-
նուկ : ազգերու կամ ցեղերու համար :
Կարծես լուեան հաւանութիւնն առած գա-
ղութական տիրապետութեան հետամուտ
Պետութիւններէ, անոնք սկսան կրակէ օղա-

ից մեր մէջ սեղմել փորձրիկ Հայկական Համա-
րապետութիւնը։ Եւեթ Նախախնամութեան
յարուցած անծի, Նախագահ Ուկրաինի ծայ-
նը, չ'ազդէր թուրքի վրայ, եւեթ մարդասէր
Ալեքսիական ծեռք չ'կարկառէր ինկած հայուն,
եւեթ իւր պաշտպանութեան տակ չ'առնէր,
արդեօք խորտակուած գրչով եւ թղթերով
Ազգի կառավարութիւնն ծեռք կոնել ու
զողներն, պիտի կարենային յետ անցնել հայ-
կական Նոր կորուստները։ Այ երբէք։ Ու-
րեմն միահամուռ յայտնենք անհուն շնոր-
հակաութիւն եւ երախտագիտութիւն մեծ
ազգի փրկարար գործին։ Բայց մեզի ալ
Ժամանակ է զգաստանալու։ Հրոյ եւ սրոյ,
սրեան ու մահուան երկունքէն ազատած
Հայութիւնն, ինչ աստիճանի, ինչ պայմանի
եւ ինչ գաղափարի տէր լինի, Մայր Հայաս-
տանի վերականգնման համար, հարկաւոր
է որ ամեն անհատ, ամեն հատուած եւ
կուսակցութիւն փորձ մի իւր Նախնա-
ծախնդրութիւնն, փորձ մի իւր *բացարձակ*
Եւն ու գաղափարներն՝ սեղմէ, ամփոփէ, զո-
նէ, որպէս գի կարելի լինի մէկ հաստատուն
Հասարակական կարծիք մը, մէկ Հաւատարմ
մը կազմել, որով լուսաւոր եւ ապահով
հայացակէտ մը ունենանք զմեզ շրջապատող
ԻՐԱՆԻԱՆ, ՌԻԹԵՆԻԱՆ հանդէպ։ Այնով լուսագոյն,
անհրաժեշտ կարծուած կամ կեղծուած
շատ մը խնդիրներ, պէտք պիտի լինի յա-
րուցանել այն Ժամանակ, երբ Հայրենեաց
հարցի հիմունքներն անշարժ քարի վրայ
դրուած ըլլան, այսինքն Հայաստանի անկախ
տէրութիւն մը ընդունուի եւ հաստատուի
խաղաղութեան վերահստողմէն։ Մինչեւ ցայն
վայր ազգային շահերն եւ խոհեմութիւնն կը
ծէլադրեն պնդ. պահել մեր Ներքին միու-
թիւնն եւ կուսակցութիւններու համերաշ-
խութիւնն, եւեթ արեւելքի ազգերու մէջ՝
յարացադէմ գը զարգացած Հայն, մնա-
ցած քաղաքակրթեալ աշխարհի առջեւ, դեռ
անկիրթ եւ անպատրաստ չհամարուի վա-
յելելու անկախ ազատութիւն։



Թո՛ղ մտաճեն անջատ մարմիններ, կու-

ասակցութիւններ, երբեմնի յեղափոխական գումարտակներն, որ այսքան տարիներու ջրածիճ կռիւներէ յետոյ, ոչ միայն իրենք, այլ ամբողջ Հայութիւնն, մահաւաճող ամբողջ մարդկութիւնն, ուժասպառ ինկած են եւ ամենքն խաղաղութեան եւ հանգրժանեան կը ցանկանան: Երկիրը վերանորոգութեան պէտք ունի. ասոր համար հարկաւոր են անմասնօրէ գործակալութիւն Հայկական միացեալ Պատերազմական կոմիտեի, հաւմախօս, միացող խորհրդով:

Միջնեւ խաղաղութեան վերածողով փա-
կումն, ազգային ինքնասիրութիւնն կը ստի-
պէ Պարիսու Հայկական Պատուիրակու-
թեանց արծմնապատուութիւնը բարձր պա-
հել օտարներու առջեւ . երկար ծեռքը պէտք
է կարճեցնել, ապա թէ ոչ ապագային ո՞վ
պիտի հաւատայ մեզի ծեռք բռնելու : Մե-
նամարտութեան բռնուած ենք թշնամոյ
հետ. եւ որ տեւէ եւ դիմանայ, նա կը յաղթէ :
Տեսլարաններու ցուցարարածին նմանէ վատ
բան չէ : Զախորդ հարուածէ մը ուշա-
թափ բմբիշն, ոգեից հեղուկներով ուշքի
կը բերեն, մենամարտը շարունակելու հա-
մար, վերջնական յաղթութեան յուսով :
Այսօր Հայ Ժողովուրդը Կարմիր գազանի
հետ սնմանմատու ուժերով, կիւզ տարիներու
մենամարտէն յետոյ, իւր բազմապիսի կա-
րիքներն հոգալու եւ կազդուրուելու պէտքն
ունի . այդ կարիքներն ստիպողական են եւ
բազմակողմանի . պէտք է մատակարարուին
հարկաւոր միջոցներն, մինչեւ յոտին կանաւ-
նի եւ վայելէ կարծիք արհուլած գնած ա-
զատութիւնն : Արդ ամենքն ալ գիտեն .
ինչպէս գիտեն նաեւ Եսասիրութեան բոցով
տոչորուող, յանցանքներ եւ սխալներ պրպը-
տողներն, հասարակաց դատաստանի առջեւ
պատասխանատուութեանց, համարատուու-
թեանց ծայն տուողներն : Հրապարակական
լեզուակոխին հակառակ կարծեաց ազգի
մեծամասնութեան՝ բաց ի վնասէն ոչ մի
օգուտ չունի . հարկ է կրկնել, թէ վարկաբեկ
ընտելծ օրինաւոր հեղուկակութիւնն, անդշ-
խանականութեան առջեւ Տանապարհի բա-
նալ է : Շատ դիւրին է լեզուի խաղաղամը
շոքազնեղով հապարտօրէն անցնիլ աշխարհ

համուտ քաղաքի փողոցներով՝ բայց կ'ըսեն՝
Թրի զարկածն կը սպիմանայ, իսկ Լեզուին՝ ոչ։

Օ՛ն, մինչ կայ ժամ, նաև հասեալ իսկ է՝ սթափեաց
մ'ի Հայաստան,

Թող զգէին ասեղութիւնս, նորոյ սիրոյ նկ տուր համբոյր։
Ոստ ժիթնայ նոր քեզ ի քոյդ հս կարկանդակ յԱնուշ
բրգանք

Երեքածուի բաղդիդ անցեալ ընդ արտասուաց ու արեան
հեղեղս։

Այ՛է՛ ընկա՛ն և պսակեաց զհաշտութեան քոյին տաճարս։
Եւ բարձրացին ի մահաբժանքս այս Հայ փառք, Հայ
սէր անմոռաց։

Հայկ Նախապետի առնական վճռակա-
նութեամբ եւ կարշնդ բազուկներով, մի
միայն նետարծակներ դէպ ուղիղ մեր դարա-
ւոր թշնամույ սրտին, կը կործանի Թուրքի
եւ բունութեան ամբարտաւան, յայնժամ մեր
սիրելի Հայրենիքն, Մայրն Հայաստան, կը
վերականգնի իւր աւերակներէն նոր կեան-
քով, նոր փառքով։ Այս սուրբ նպատակին
հասնելու համար, պէտք է ժողովինք մեր
բոլոր հոգեկան եւ բարոյական ոյժերն՝ քա-
ղաքացիական համերաշխութեամբ՝ Թուրքի
յետին ջրածգու թիւններու, քաղցինքու դէմ։
«Ջի արքը օրհասականք հզօրագոյնս կուովն
ի պարզել ոգւոցն»։ Բայց հակառակ Եղի-
շէի թելադրութեան՝ մենք կը յորդորենք
մեր իմաստունները տեղի չտան, չփախչին,
այլ քաջութեամբ դաշոյնը գազանի սիրտը
մխեն։

Յիշենք զիրար, եղբայրներ,

«Միաբանութիւն ու սէր մէջ քաշենք....»
«Ընկենք իրարու օգնող ու վստահ»
«Երբ Հայոց ճակատին վառէ մեր սրտեր
«Յայնժամ կը տեսնենք երջանիկ օրեր»։

Ո՞ր ջմուռանք թէ մեր սիրելեաց եւ քա-
ջաց մարտիրոսական անբլծ արիւնը, դեռ
չէ ցամբած Հայաստանի երեսէն, եւ դեռ
կան կենդանի նախատակներ, որոնք մեր
Միութիւնն կ'աղերսեն։ Նոյնը Հ. Ալիշան
իւր կտակով մեզ կ'աւանդէ։

«Ի յեզր՝ հողոս երդումն ուզեմ ձեզից, ո՛վ Հայք,
«Այս հատաչանքս ըլլան ձեր ժայն. ձեր այս փափաց,

«Որ հանդարտիկ ելնէ հոգեակս երթայ խաղաղ,
«Գերեզմանիս ծագէ արեւն Հայոց ծիծաղ...»
«Ո՛հ, Թող մեռնի ձեր Նահապետ, մոռու տապան».
«Այլ Թող ելնէ ի տապանէն ՆՈՐ ՀԱՅՍՏԱՆ»։

—

Քաջագօտի հայ մանկտին խորտակելով
իւր ոտների տակ մեր դարաւոր թշնամի-
ներն, արծուոյ խոշորով թռան բարձրացան
քաջութեամբ եւ փառքով իրենց հերմակ
հերմակ անվախ սարիւրու գլուխն՝ անդի-
տելու Ազատութեան արեւի ծագումն։ Ի՛նչ
հրաշալի տեսարան Ազատ լեռան աստղա-
հեմ գագաթէն՝ երկնքի եւ երկրի երկունքը
եւ Հայ հայրենեաց հանդէսը Նախապետի
հետ երգել։

Ահա ելնէր արեւն յամպոց
Վարդ կու թափէր յաշխարհն Հայոց.
Յօղըն տեղայր զով ու սիրուն
Ջինչ մարգարիտն ի սատափուն.
Կարմիր կանաչ ծին ծիրանի
Գօտի ածուէր Հայաստանի,
Գերեզմաններն լուս էին
Խաչվճին ի քուն աղօթին,
Տէրն ողորմի հանգուցելոց
Եւ ամենայն երկրիս Հայոց,
Ահա տեսնեք զերկնք պոյժաւ,
Շըրթներն՝ երկրիս Հայոց հաւաք,
Հաւերն ի հունչ, հովերն ի ջունչ
Օղըն վառվառ, ջուրն ի մըրժունջ.
Լուսիկս է ճոխ, արեւս անուշ,
Սարերն ի վար իջնումք մեք ուշ,
Ահա ի գունտն երթայր արեւ
Նահապետին մենք տանք բարեւ. —
Ծեր Նահապետն այլ ձեզ բարեւ.
Աստուած վերէն տալ ջառ արեւ.
Իժիք զնացէք զօրք յայդ հանդէս
Հայ Հայրենեացդ ելնք ի տես։

—

Տար աւետիս, ո՛վ Նախապետ, մեր հին
Հարց՝ թէ եւագոյն, եւախորհուրդ դրօշն
Հայոց կը ծածանի Նոր Հայաստանի վրայ։
Գեղեցիկ գարունն եկած է։

Երանին տամք քեզ Հայոց աշխարհ։

ՄԵՐԻՆ ԴԵՐՄԱՍ